

գառնայ ու իր տեղը հասնի . ասոր շարժմունքէն առաջ կուգայ գիշերա . հաւասարներուն կանխելը՝ որուն շըրջանն է 25,804 տարուան :

Դ . Շուիլկէն հին ժամացուցին ինքնաշարժ արձանները ոչ միայն կատարելագործեց , հապա նաև շատ ցուց , ինչպէս են 12 առաքեալները : Եւ զարմանալին աս է որ աս արձանները ամէնն ալ իրօք կըշարժին , ու քալելով առաջ կերթան , չէ թէ հիներուն շինածին պէս գետինը քսուելով : Շատ սիրուն է ան հրեշտակին շուտով ու աղուոր կերպով մը աւազէ ժամացոյցը գարձընելը . նմանապէս աքաղաղին բնական շարժմունքը :

Ո՞էկ խօսքով , աս մեքենայովս Շուիլկէին չէ թէ միայն երեկելի մեքենագէտ և ուսումնական ըլլալը իմացուեցաւ , հապա նաև երեկելի բընաբան ըլլալը . որովհետեւ առաջուց մտածեր ու դէմը առեր է ան հետեանքներուն , որ օդին փոփոխութիւններէն կրնային առաջ գալ մեքենային վրայ . մանաւանդ Աթրասպուրկի պէս տեղ՝ որ օդը շատ փոփոխական է : Իոլոր մեքենան պղընձէ է . բայց այնպէս վարպետ կերպով թափուած ու բանած , որ գրեթէ սողպատի պէս կարծր է : Իմէն մէկ կտորը այնպիսի դրբով շարուած է որ օդին փոփոխութենէն այլայլելու ամենեին վախ չկայ : Ինկէ զատ , ամէն մէկ մասը այնպէս տեղաւորած է որ մէկ մասը կրնաս մէջէն զատել վերցընել՝ առանց մէկալնոնց շարժմանը արգելք մը ընելու : Իշամացուցին Ճօնանակը՝ խիստ կատարեալ է , որովհետեւ Ճիշդ ջերմաչափով մետաղէ մասունքներուն ամենամանը այլ այլութիւններն ալ չափեր է Շուիլկէն : Ջապացուցին քովը միջօրէական գիծ մըն ալ կայ շատ վարպետութեամբ գծած : Ա երջապէս , թէ որ ժամանակը՝ որ մարդկային ամէն Ճարտարութիւնն ու գիւտերը կաւրէ

կըփշացընէ՝ աս երեկելի գործքն ալ աւրելու ըլլայ , յուսանք որ Շուիլկէին ըրած բարակ հաշիւները գրով կըմնան , ու ետեւ եկողներուն սիրտ կուտան որ իրենք ալ՝ առանց անոր պէս շատ աշխատելու՝ նոյն հաշիւներով այսպիսի բանի մը ձեռք զարնեն , ու գլուխ հանեն : Լարժէ որ աս ստորագրութիւնը լմնցընենք Պ . Լ է հը անունով գիտնականին չորս տող ու տանաւորովը , որ իմաստնոց ժողովը քին մէջ կարդաց Շուիլկէին վրայ .

Քոյդ ժամացոյց , ո՛Շուիլկէ , արդինք երկանց իմաստուն ,

Մեղ զաստեղաց գըծագրէ շըջանս ամէն ներդաշնակ :

Այնչ է մարդ հողածին յերկնիցյառեալ ծիր անհուն ,

Այլ հանձարոյն տարացոյց իցէ անմահ քոյդ վաստակ :

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՃԻՄՑԱԳՐՈՒԹԻՒՆ

Աստրիայի ակրութեան ընդհանուր Վաճակ :

Ախտարւան Աշրոպային գրեթէ մէջ տեղուանքը կիմնայ , ու տասնըութը զանազան տէրութիւններու սահմանակից է . Լարպաթեան լերանց գօտիները գրեթէ բոլոր իր ձեռքն են , ու Օդրանսիլվանիայի անառիկ լեռները ահագին պարիսպ են իրեն : Շնակիչներուն թիւը 1841ին երեսունուվեց միլիոնէն աւելի էր . և ասոնց տարուէ տարի շատնալը , Իգուասիայէն Ուուսաստանէն և Ինդղիայէն զատ՝ ուրիշ ամէն տէրութիւններէն աւելի շուտ է : Իւստրիայի կայսրը ոչ միայն գերմանական դաշնակցութեան նախագահն է , այլ և բոլոր Աշրոպայի տէրութեանց առջեւը մեծ ազդեցութիւն ունի :

Իւստրիայի բնակիչներուն գրեթէ 7 միլիոնը գերմանացի է . գրեթէ

16,500,000ը սլաւեան . 5 միլիոնէն աւելին իտալացի . 5,330,000ը մաշառ . 1,700,000ը վլահ . 623,000ը հրեայ . 120,000ը չինկեանէ : Խակյունը՝ հայն ու առնաւուտը քիչ է :

Կրօնի և արարողութեան կողմանէ Աւստրիայի բնակիչներուն 26 միլիոնը լատինածէս հռոմէական են , և 12 արքեպիսկոպոսարան ու 59 եպիսկոպոսարան ունին . 3,447,000ը յունածէս հռոմէական են , և ունին 1 արքեպիսկոպոս ու 5 եպիսկոպոս . 2,680,000ը յունադաւան են , և 1 արքեպիսկոպոս ու 7 եպիսկոպոս ունին . Հայերը հռոմէական են , ու մէկ արքեպիսկոպոս մը ունին որ Խլվով կրօնատի : Լուտերականք 1,600,000 են , և կալվինականք 2,085,000 :

Հռոմէական եկեղեցականաց եկամուտը , որ կուգայ անշարժ ստացուածքներէ , պահեստի յիշատակներէ ու թագաւորական գանձէն , տարին 14 միլիոն ֆիորինի կըհամնի . ասոր մէկ միլիոնը տէրութեան գանձէն կելլէ :

Ծոլոր կայսերութեան մէջ գրեթէ 610 վանք կայ , մաճառստանինները չամրելով . ասոնց եկամուտը իրեք չորս միլիոն ֆիորինի կըհամնի : Ամէն կրօնաւորաց թիւը , այր և կին , 10,200 է : Հյունադաւան քրիստոնեաներն ալ գրեթէ 40 վանք ունին Տալմացիայի Ամառստանի ու Լալիցիայի մէջ :

Ազնուականներուն թիւը աս տէրութեան մէջ 750,000ի չափ է . և ասոնք համեմատութք աւելի շատ են Ամառստան , Ուգանսիլվանիա ու Կալիցիաքանթէ մէկալգաւառները :

Տէրութենէն ոռաջիկ՝ ունեցող պաշտօնատէրները 34,300 հոգի են . և այսպիսի պաշտօնատէրներ աւելի շատուոր են վերին և ստորին Աւստրիա , Ուգրովի երկիրը , ծովեզերեայ գաւառները , Լոմպարտիա ու Անտիկ :

1 էօնքնէ :

Խաղաղութեան ատեն՝ պատրաստութիւն վրայ եղած զօրքը 250,000 է . բայց պէտք եղած ատենը տէրութիւնը շուտ մը կրնայ ինչուան 550,000 հոգի ժողվել՝ ամէնն ալ զինուորութեան մէջ աղէկ կրթուած : Պատերազմական զէնքերը թէ բազմաթիւ են և թէ ընտիր . ձիաւոր զօրքը շատ վարժ , և բոլոր զինուորութիւնը առատ թուշակ ունի¹ : Առվորական ատեններ բոլոր զօրքին համար տէրութեան ըրած տարեկան ծախքն է 40էն ինչուան 42 միլիոն ֆիորին : Իուն Աւստրիայի՝ Պոհէմիայի ու Լալիցիայի մէջ ամէն մարդ պարտականութիւն չունի զինուոր ըլլալու . մանաւանդ ազնուականները , տէրութեան պաշտօնատէրները , օրէնսդիտութեան վարժապետները , բժիշկները և այլն : Օ ինուորութեան ժամանակին չափը հիմա տասնըզորս տարի է : Ով որ ուզէ՝ կրնայ իր տեղը ուրիշ մարդ դնելով ազատիլ զինուորութեան երթալին . զինուոր գրուելու հասակը տասնըիննէն ինչուան ամբողջ քսանըիններորդ տարին է : Ամառստանի մէջ զինուորութեան ժամանակը 10 տարի է . Խտալիայի մասին մէջ 8 . և աս կողմերս զինուորութեան հասակ կըսեպուի քսանէն ինչուան ամբողջ քսանըհինգը . ասոնց ընտրութիւնը վիճակով կըլլայ , և օրէնսուսոյցները՝ փաստաբաններն ու բժիշկները ազատ չեն զինուորութենէ : Արայն երբոր տղայ մը իր ծնողացը մէկ հատիկն է , ազատ է :

Հյուվու կողմանէ Աւստրիայի տէրութիւնը շատ ապահով ըլլալով մէկ նաւարան² մը միայն ունի , որ է Անտիկ :

1 Գնդապետները կամ հարիւրապետները չեն կրնար կարգուել՝ թէ որ չորս հազարէն ինչուան տասնըվեց հազար ֆիորին գրաւ չփնեն տէրութեանձը . աս օրէնքին օգուտը ան է որ մեռնելու ըլլան նէ՝ իրենց որբեարինները ապրուստ կունենան : Խակ թէ որ զօրապետ մը պատերազմին տէղինայ , կամ պատերազմի մէջ առած վէրքէն մեռնի , տէրութիւնը անոր որբեարին մասնաւոր թոշակ կրապէ :

2 Թէրուանէ :

Նետիկի նաւարանը : Հիմակուան
պատերազմական նաւերն են 3 Քրէկա-
լա , 2 Քրէկալա , 3 պրիդ , 3 Հռկելա ,
ու 46 ուրիշ մանր նաւեր . իսկ ծո-

Վային զօրքն է 2000 հոգի : Ուրիշ անգամ կըխօսինք վաճառականութեանը, արհեստներուն, հանքերուն և ուրիշ յատկութիւններուն վրայ :

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



“Եաւը շահ, որ է Պահմակ գույն իսպան:

ԵՇԱՆԱՐՀՔԻՄ մեծամեծ բռնակալ
ներուշ պատմութենէն գլխաւոր աս
խրատս կառնէ մարդ, թէ չարագոր-
ծին յաջողութիւնը որչափ ալ մեծ ու

զարմանալի երևնայ, խիստ քիչ ատեն դիմանալուն ու ետքը չարացար կերպով վերջանալուն համար՝ զգուելի ու ատելի կըլլայ: Այս օգուտը միայն